

# Փ Ո Ւ Ն Ձ

## Օ Ր Ա Ք Ի Ր

Սմեն օր կհրատարակուի : — Հատը 40 փարայ է : — Պոլիս բաժանորդ ըլլալ ու գող ձէկ արժաթ Մէճիս պիտի վճարէ 100 թուոց համար իսկ գաւառաց մէջ 25 դրչ, գարձեալ 100 թուոց համար , թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Մանուցման ատը 40 փարայ է մէկ անգամի համար : — Արագրիս մերաբերեալ նամակ եւ ուրիշ որչ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ վարի գրանը կից նոր Գրատունը :

### Ս. Ձ Գ Ս Յ Ի Ն

Սահմանադրութիւնը վերաքննութեան յանձնած օրովն իր գործը ըննչուցած ըլլալով, փոքր Տեղապահ սրբազանին պիտի յանձնուի :

— Խոստովելի թաղական խորհուրդը՝ ըստ ինդրանոց ժողովրդեան սերտջանաց : Պատրիարքարանը եւ թեկ վաւերացուց խորհրդոյն կողմանէ Տպագամոց համար եղած ընտրութիւնը : Հետեւորդ ըլլալ է ընտրուողոյն անդամները 2 կամ 4 եւ կամ 6 մնացած ըլլալուն ինդիրը կվերջանայ :

— Կլեմէք թէ՛ Սեբաստիոյ տորնաւիր Պատր. Փոխանորդ Գեր. Տ. Ե. բեմիս եպիսկոպոսը Սեբաստիա հասնելով, խղիւղիկեան մեծ . Յարութիւն ազային տունը իջնի է :

— Գեր. Հասունեանի կողմանէ, կրօնական ժողովոյ մը գումարման համար, գաւառներէն հրաւիրեալ արք. եպիսկոպոսունք եւ եպիսկոպոսունք գրեթէ ամենքն ալ մայրաքաղաքս եկած ըլլալով, առաջիկայ շարաթ օրը առաջին նիստը պիտի ըլլայ եղեր : Յայտնի չէ տակաւին թէ այս ժողովին մէջ ինչ ինդիրներու վրայ խորհրդապետութիւն պիտի ըլլայ :

— Հռոմէական ազգայնոց մեծագոյն մասը ամենայն հաստատամտութեամբ կշարունակեն իրենց բողոքը ընդդէմ դեր . Հասունեանի, եւ կլանան բարեկարգութիւններ հաստատել :

Մեր այս ազգայնոց կողմանէ փոխանորդարար, վոսմ. Միհրան պէյ Տիւզ Պէտան պէյ Սպարուլահ Միքայէլ Էմէնտի եւ Պիւէռիկճեան, մայրաքաղաքս ժողովն համար հրաւիրեալ եպիսկոպոսաց երթալով, բարեկարգութեան ծրագիր մը եւ ընդդէմ գեր. Հասունեանի բողոքագիր մը մատուցեր են : Գերապատիւ եպիսկոպոսունք ազգային այս նշանաւոր երեսփոխաններն ամենայն սիրով ընդունելով, ազահոյցուցեր են զանոնք թէ ժողովին պիտի ներկայացունեն թէ ծրագիրն ու թէ բողոքագիրը եւ խորհրդակցութեան առարկայ պիտի ընեն :

Երաց այս վիճակէն կրնանք գուշակել թէ՛ Հասունեան հիմա անհաստատ վիճակի մէջ կլանուի, քանի որ ժողովրդեան մեծ եւ ողջամիտ մասը բողոք կբառնայ : Գեր. Հասունեան



արդեօք չ'պիտի զիջանի լսել ու յար-  
գել ժողովրդեան ձայնը . թէ՛ հե-  
տևելով իր մեծաւորն եղող Պապին ,  
« սչ կարեմ » պիտի գոչէ ու յամառի ,  
և հեռուաբար իրազարութեան տեղ  
իռուփութեան պատճառ ըլլայ :

Մեր — Գաղղիացի Գործերը

Գաղղիոյ հասարակաց կրթութեան  
պաշտօնատան կողմանէ հրատարակ-  
ուած վիճակագրութեան մը նայելով ,  
բոլոր Գաղղիոյ մէջ 33638 գաղղաց կայ ,  
և ասոնց մէջ 793476 աշակերտ ու ա-  
շակերտուհի ընդունուեր են վերջին  
վեց ամսոց մէջ : Կառավարութեան  
կողմանէ այս գաղղացներուն համար  
4847,943 Ֆրանկ տարեկան յատկացած  
ըլլալէն զատ , 44300 ուսուցիչք՝ ցե-  
րեկային , և 42800 ուսուցիչք՝ գիշե-  
թօթիկ աշակերտաց ձրի դասախօսու-  
թիւն կրնեն , և խզի՛ մամի՛ փայտի ու  
բին 300000 Ֆրանկէն աւելի ստակ  
կրնայ իրենց անձնականէն կվճարեն  
կողեր :

Այս վիճակագրութիւնը տեսնազ  
չոյ մը եթէ ազգային յառաջադիմու-  
թեան համար քիչ շատ փափաք կը  
կրէ իր սրտին մէջ , չկրնար անտար-  
բերութեամբ կամ հարեանցի կեր-  
պով անցնիլ : Եթէ ընդհանուր և ու-  
շագիւր ակնարկ մը նետենք մեր ազ-  
գային գաղղացաց և ուսուցչաց ու ու-  
սանողաց թուոյն վրայ , պիտի տես-  
նենք թէ՛ մեր ազգը սրչափ ետ մնա-  
ցած է և ներկայ վիճակովն ու ընթաց-  
քովը սրչափ յառաջադիմութիւն յու-  
սակի է : Գաղղիոյ ազգը գաւառաբա-  
կութեան համար սչինչ չ'խնայելէն

զատ , կառավարութիւնն ալ ամեն առ-  
բի ինչպէս կտեսնուի՝ խոշոր գու-  
մարներ կըսէ այս մեծ գործին յա-  
ռաջդիմութեան համար . բիւրաս որ  
ուսումնական ու գիտուն անձինք գի-  
շեր ու ցերեկ ձրի դասախօսութիւն  
կրնեն , և որ յոյժ գովելին է՝ իրենց  
անձնականէն բաւական մեծ գումար  
մ'ալ կնուիրեն գաղղացական առանին  
ծախուց համար : Երբ տեսանք վեր-  
ջին տարիներս որ մեր ազգային կա-  
ռավարութիւններէն մէկը հաշուե-  
ցուցակ մը հրատարակած ըլլայ , և  
այսչափ գումար մ'ալ ազգային գըղ-  
րոցներու օգնութեան համար վճա-  
րած ըլլալը յույնէ : Եթէ չեմք սխա-  
լի , մեր չհաւնած այն հին ժամա-  
նակներուն մէջ ազգային անանկաց  
անտուկ մը կար , որ ազքաա գաղղոց-  
ներու համար ալ օգնութիւն կրնէր :  
Հիմա որ կհամարինք թէ յառաջ կեր-  
թանք , լուսաւորուած ենք ու կրուս-  
տարեւաբար զգնուինք գաղղացական  
կրթութեան կողմանէ սչինչ ուշագրու-  
թիւն կայ այս կենսական խնդրոյն վը-  
րայ :

Սահմանադրական վարչութեանց  
ատեն այս մասին արդիւնաւոր անօ-  
րինութիւն մը չեղաւ , թէև երբեմն  
երբեմն խօսքեր եղած են : Իսկ առ-  
ժամանակեայ վարչութեանց օրով այս  
խնդիրը բոլորովին մնացուեցաւ : Այս  
վարչութեան վերջին վերակազմու-  
թեան ատեն , սրուն մէջ վստմ . Սա-  
եան էֆէնտիի նչն ազգասէր և հա-  
սարակաց սիրելի անձ մը տեսնելու ու-  
րախութիւնն ունեցանք , կյուտայինք  
որ ազգային գաւառաբաւկութեան հա-  
մար ընդհանրական անօրինութիւն մը  
կըլլայ , բաց զժբաղդարար անակըն-



կալ խնդիրներ մեր յոյսը մինչև ցարդ  
անպակ թողուցին : Թերևս այսու  
չետեւ , ներկայ առժ . վարչութեան  
ատեն՝ որ նորրնտիր արժանաւոր ան-  
դամներով զարդարեցաւ , Օսեան է-  
ֆենտին անսնց օժանդակու թեամբ ձե-  
ւորնչաւ դանուի ազգային կենսական  
խնդիրներով ալ զբաղիլ : Վարչու-  
թեան առժամանակեայ ըլլալը հոգ  
է , և յիրնար արդեւք ըլլալ ազգ-  
օրուտ ձեռնարկութեանց : Սահմանա-  
դրութիւնը մինչև որ վերահաստատ-  
ուի , առ նուազն՝ տարի մը կտեւէ . ուս-  
տի հարկ չէ սպասել : Քանի որ Տրն-  
ակտական խորհուրդ մը կազմելը ա-  
պօրինաւոր չէ . ուրեմն՝ ապօրինաւոր  
չիրնար ըլլալ ուսումնական խորհրդոյ  
մ' ալ կազմութիւնը : Ուսումնական խոր-  
հուրդ մը պէտք է որ ընդհանուր հըս-  
կարութիւն ընէ ազգային վարժարա-  
նայ վրայ . քննէ իմանայ թէ ուսու-  
ցիչք ինչ կառվարեցունեն և ուսանողք  
ինչ կառվարին . իմանայ թէ որ գասա-  
տան դաստիստութեան յարմար է .  
վիճակազրէ թէ քանի վարժարան ,  
քանի աշակերտ կայ , և թէ այս վար-  
ժարաններն բաւակա՞ն են , կամ՝ ա-  
նոնք ինչ վիճակի մէջ գտնուելու են ,  
որ ազգին ազխտութեան առաջքն  
առնելու միջոց ըլլան :

Առժ . վարչութիւնը անշուշտ մե-  
նէ աւելի վերահասու եղած է թէ՛ մեր  
ազգին ներկայ ապահովալից վիճա-  
կին գլխաւոր պատճառը ազխտու-  
թիւնն է : Վարչութիւնը որ այս վի-  
ճակին բարւոքութեան նուիրական  
պաշտօնն ըստանձնած է , աւելորդ է ը-  
սել թէ իր գլխաւոր պարտաւորու-  
թիւնն է մեր ազգին մէջ համատարած  
եղած ազխտութեան առաջքն առ-

նել , և առ այժմ՝ ուսումնական խոր-  
հուրդ մը հաստատել , ուսումնական  
ուրանիւրուն և դործունեայ անդամ-  
ներէ բազկացունելով :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հայէպի կուսակալութեան Բու-  
սումնաթի վերապատուչ անուանեցաւ  
արաւքին դործոց պաշտօնատան դը-  
րասենեակին նախորդ անօրէն Բիֆաթ  
պէյ , առաջին աստիճանի երկրորդ  
կարգի պաշտօնատարութեամբ :

—Սէլանիկի կուսակալութեան կեդ-  
րոնական նախորդ միւթէսարքի Ֆա-  
յիզ պէյ միւսնոյն պաշտօնով և յիշ-  
եալ աստիճանաւ Ատանա պիւտի գըտ-  
նուի :

—Կայսերական երրորդ բանակին  
համարակալութիւնը յիշեալ աստիճա-  
նի պաշտօնատարութեամբ էշրէֆ է-  
ֆէնտին յանձնուեցաւ , որ յառաջ  
Նիզամիյէի համարակալութեան մի-  
մէյիզներէն էր :

—Կայսերական հինգերորդ բա-  
նակին համարակալ կարգեցաւ յիշ-  
եալ աստիճանաւ , կրետի գինուո-  
րական նախորդ մատակարար Մուխ-  
թար էֆէնտի :

—Պարտաւի կուսակալութեան մեծ  
ժողովին նախորդ նախագահ Եաչեա-  
Նէզէթ էֆէնտին Ատանայի ընդհա-  
նուր կառավարչին օդնական անուա-  
նեցաւ :

—Մանուրիյէթ—իւլ—Ազիզի նա-  
խորդ համարակալ Վէհպի էֆէնտին  
Սըլայի կուսակալութեան կեդրոնա-  
կան միւթէսարքի կարգեցաւ :

—Երկրորդ աստիճանի երկրորդ  
կարգի պաշտօնատարութեան բարձ-



բացաւ Այտնի կուսակալութեան օտար թղթակցութեան վերատեսուչ Տիրան էֆէնտին :

— Պարթընի նախորդ գայմագամ Մէհմէտ Նուրի փաշան Պօլիի միւթէ-տարրքի անուանեցաւ :

— Պաղտատի կուսակալութեան մէջ մէկ կողմը տաճկերէն և միւս կողմը քաբերէն լեզուներով գաւառական լրագիր մը հրատարակուել սկսաւ , ի շնորհս ընդհանուր կառավարիչ վեմի . Միտհաթ փաշայի : Այս լրագիրն աւայժմ շաբաթը անգամ մը պիտի հրատարակուի :

Ամերիկայի մէջ հարուստ մարդ մը մեռնելով , կտակ մը ձգեց է , որով ընտանիքն ու ազգականները զըրկելով իր հարստութեան ժառանգութենէն , կգատուիրէ որ ընդարձակ հաստատութիւն մը շինուի յատկապէս կատուներու համար : Այս զարմանալի մարդը իր կտակագրին սկիզբը խօսելով աշխարհի բոլոր կենդանեաց առ մարդկային ազգն ունեցած օգուաներուն վրայ , մասնաւորապէս կիշչատակէ կատուն և կըսէ թէ « Այս կենդանին մարդոց համար հաստարկմ գործակատար մ'է . իր սրբտիկութեան ատենը զանազան խաղերով կըբօցնէ զմարդիկ , իսկ երբ մեծնայ՝ միշտ հետամուտ է բնաջինջ ընելու մկնեքը , որոնք մեծ քնաներ կը հասցնեն մարդոց ուտելիքին խմելիքին ու հագնելիքին : Իմ կենդանութեանս ատենը , կրտէ , կատուներու բառական վարձատրութիւն ըրի , բայց ուղերով մահու ընէս ետքը ու երբ մեծ վարձատրութիւն մ'ընել կենդանեաց այս սեռին , որոշեցի յատուկ շէնք մը

կանգնել ապա ասոնց համար , և ոչինչ ժառանգութեամբ ընտանեացս ու ազգականներուս , որոնց համար պէտք եղածն ըրի կենդանութեանս ատենը » : Վախճանեալ կատուանը ամերիկացին իր կտակագրին մէջ այս յառաջարանութիւնն ընելէն յետոյ , շինուելիք հաստատութեան գիրքը և կատուներուն ըլլալիք մատակարարութեան եղանակը կնշանակէ , որ խիստ հետաքրքրական և զուարճալի է , և պիտի հրատարակեմք յաջորդ թերթով մը :

Պոնէա Քլիմա-տորը , լեզու-տու-էր-ձառ-դէ և ընչարեաց սիրահար

Այս հանրածանոթ և ընտիր վէպին թարգմանութեան ու ապագրութեան ձեռք զտրնուած է , շաբաթը Նախկան երեսէ բողկացեալ երկերկու մեծադիր թերթեր հրատարակելով : Իսկ ժանտրդ աղբու թեան գինն է մէկուկիս արծաթ մէճխ . իսկ զատ թիւ առնել ուղղը հատին Ջ զուրուշ պիտի վճարէ : — Բաժանորդ աղբու թեան տեղըն է Պ. Յ. Գալաֆեանի գրատունը և Զորապէս խանին դէմ թիւ 44 փոխանայք :

Միւհէնտիսեան մեծ . Յոյհաննէս ազգայի սպարանէն դեղեղիկ և նորածն սածիկ գրերով ի լոյս բերանայ նալ « Թարիդի Սերլէթ » անուն բարոյական տարակ մը , Յական դուրուզ կծարտի Մէրճանը Մարդարեան Պ. Քերովրէի 88 թիւ , Մահմուտ փաշայ Քիւրքճի խանի գիմացը կզմիրլեան Պ. Սողաննի , Ուզուն շարժով գլուխը Տնտեսան Պ. Եղիայի 46 թիւ գրատունը , Կառաթա Մ. Լուսաւորիչ եկեղեցւոյ գիմացը Միւհէնտիսեան սպարանը , Թ. 47 :

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԻՐ  
Է. Ե. ԱԼԱՅԱՆԵԱՆ  
ՅՈԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. Յ. ՏՈՒՐՅԱՆ